ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՐԱՄԱՆ

«18» «հունվարի» 2021 թ. № 9-Լ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԵՎ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐՈՒՄ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐՈՎ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Կառավարության 2015 թվականի հունվարի 22-ի N 46-Ն որոշման N 1 հավելվածի 4-րդ և 7-րդ կետերը, ղեկավարվելով վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N745-Լ որոշման հավելվածի 18-րդ կետի 20-րդ ենթակետով և շրջակա միջավայրի նախարարի 2021 թվականի հունվարի 14-ի N 5-Լ հրամանի 4.2 և 4.3 ենթակետերով.

ՀՐԱՄԱՅՈՒՄԵՄ՝

1. Հաստատել արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության ոլորտներում շրջակա միջավայրի նախարարության համակարգի աշխատակիցների և քաղաքացիական պաշտպանության կազմավորումների 2021 թվականի ուսուցման ուսումնական ծրագիրը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել շրջակա միջավայրի նախարարի տեղակալ՝ քաղաքացիական պաշտպանության շտաբի պետ Տիգրան Սիմոնյանին:

ՆԱԽԱՐԱՐ Ռ.ՊԵՏՐՈՍՅԱՆ

1/18/2021

X

ՌՈՄԱՆՈՍ ՊԵՏՐՈՍՅԱՆ

Signed by: PETROSYAN ROMANOS 3608790012

«18» հունվարի 2021թ.
ք.Երևան

Հավելված
Շրջակա միջավայրի նախարարի
«18» հունվարի 2021թ. N 9-Լ հրամանի

Ուսումնական ծրագիր
արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության ոլորտներում շրջակա միջավայրի նախարարության համակարգի աշխատակիցների և քաղաքացիական պաշտպանության կազմավորումների
2021 թվականի ուսուցման

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն ուսումնական ծրագիրը հանդիսանում է արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության (այսուհետ՝ ՔՊ) ոլորտներում Հայաստանի Հանրապետության (այսուհետ՝ ՀՀ) կառավարման մարմինների և ուժերի պատրաստման, բնակչության ուսուցման միասնական համակարգի բաղկացուցիչ մաս և նախատեսված է շրջակա միջավայրի նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) համակարգի աշխատակիցների և ՔՊ կազմավորումների անձնակազմերի ուսուցման համար:

2. Ծրագրում սահմանվում են ուսուցման ձևերը, պարապմունքների թեմաներն ու ժամերի բաշխումը, ուսուցման գործընթացի կազմակերպումն ու անցկացումը, ինչպես նաև ուսուցանվողների գիտելիքների մակարդակի ստուգումը:

3. Նախարարության աշխատակիցների և ՔՊ կազմավորումների անձնակազմերի ուսուցումը կազմակերպվում և իրականացվում է «Քաղաքացիական պաշտպանության մասին», «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին» օրենքներով, Կառավարության 2015 թվականի հունվարի 22-ի «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության

ոլորտներում Հայաստանի Հանրապետության պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների ու կազմակերպությունների պատրաստման և տվյալ ոլորտների հիմնահարցերով բնակչության ուսուցման կարգն ու ծրագիրը սահմանելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հունվարի 30-ի N 134-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 46-Ն որոշմամբ և այլ իրավական ակտերով:

II. ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԵՎ ՔՊ ԿԱԶՄԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ԱՆՁՆԱԿԱԶՄԵՐԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

4. Ծրագիրը նախատեսված է ռազմական գործողությունների իրականացման կամ դրանց հետևանքով առաջացած վտանգների, տարերային ու տեխնածին բնույթի արտակարգ իրավիճակների դեպքում Նախարարության համակարգի աշխատակիցների և ՔՊ կազմավորումների պատրաստականության բերման, հասարակական կարգի պահպանության, անձնակազմի առաջնահերթ կենսաապահովման, տուժածներին առաջին օգնության ցուցաբերման, փրկարարական և այլ անհետաձգելի վթարավերականգնողական աշխատանքների իրականացման ժամանակ անձնակազմի ներդաշնակ գործողությունների հմուտ, համակարգված և առավել արդյունավետ մեթոդների, ձևերի ու եղանակների ուսուցման, առկա տեխնիկայի, գույք-սարքավորումների և գործիքների կիրառման (օգտագործման), ինչպես նաև անվտանգության կանոնների ու միջոցառումների համապատասխան տեսական գիտելիքների և գործնական հմտությունների ձեռքբերման ու կատարելագործման համար:

5. Ուսուցման գործընթացն իր մեջ ներառում է.

1) Նախարարության համակարգի ստորաբաժանումների՝ արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և ՔՊ ոլորտներում պատասխանատու ղեկավարների վերապատրաստումը,

2) Նախարարության համակարգի աշխատակիցների և ՔՊ կազմավորումների ուսուցումը,

3) սույն ծրագրով Նախարարության համակարգի աշխատակիցների և ՔՊ կազմավորումների անձնակազմի ուսուցման ընթացքում համապատասխան գիտելիքների ձեռքբերումը,

4) ուսումնավարժությունների, վարժանքների ու այլ գործնական միջոցառումների ընթացքում Նախարարության համակարգի աշխատակիցների և ՔՊ կազմավորումների անդամների գործնական հմտությունների ձեռքբերումն ու կատարելագործումը:

6. Նախարարության համակարգի աշխատակիցների և ՔՊ կազմավորումների ուսուցումը պլանավորվում և իրականացվում է տարեկան մեկ անգամ՝ առնվազն 16 ժամ ընդհանուր ծավալով:

7. Նախարարության համակարգի աշխատակիցների և ՔՊ կազմավորումների նախապատրաստման և անձնակազմի ուսուցման ապահովումը դրվում է համապատասխան ստորաբաժանման պետի վրա, ով համակարգում, կազմակերպում և ղեկավարում է ուսուցման գործընթացը:

8. Նախարարության համակարգի աշխատակիցների և ՔՊ կազմավորումների նախապատրաստումն իր մեջ ներառում է ընդհանուր, հատուկ պատրաստության պարապմունքներ, այդ թվում՝ շտաբային ուսումնավարժություններ և հատուկ տակտիկական վարժանքներ:

9. Ընդհանուր պատրաստության պարապմունքներն իրականացվում են սույն հավելվածի ձև 1-ում բերված թեմաների ողջ ծավալով:

10. ՔՊ կազմավորումների անձնակազմի ընդհանուր պատրաստման համար որպես ուսուցման հիմնական ձև սահմանվում է դասախոսությունը, որը պետք է ապահովի՝

1) Նախարարության համակարգի աշխատակիցների և ՔՊ կազմավորումների խնդիրների ու դրանց նշանակության պարզաբանումը,

2) Նախարարության համակարգի աշխատակիցների և ՔՊ կազմավորումների նախապատրաստման և պատրաստականության բերման ներդաշնակ գործողությունների կատարելագործումը,.

3) ՔՊ կազմավորման առկա տեխնիկայի, գույք-սարքավորումների և գործիքների օգտագործման ժամանակ անվտանգության միջոցառումների պահպանումը:

11. Նախարարության համակարգի աշխատակիցների և ՔՊ կազմավորումների գործնական հմտությունների կատարելագործման, գործողությունների ու հնարքների ճիշտ և հստակ կատարման համար իրականացվում են շտաբային ուսումնավարժություններ և հատուկ պատրաստության պարապմունքներ:

12. Հատուկ պատրաստության պարապմունքների մեթոդը գործնական և տեսական պարապմունքներն են, իրականացվում են սույն հավելվածի ձև 1-ում նշված ուսումնական թեմաների շրջանակում:

13. Հաշվի առնելով ՔՊ կազմավորումների նշանակությունն ու դրանց խնդիրները, հատուկ պատրաստության պարապմունքներում կարող են ընդգրկվել առաջարկվող ուսումնական թեմաներից մեկը կամ մի քանիսը:

14. Ծրագրի յուրացումից և գործնական պարապմունքներից հետո՝ ստացած գիտելիքների և գործնական հմտությունների ամրապնդման նպատակով, անց է կացվում սեմինար-պարապմունք, որի ընթացքում՝ ուսումնասիրված ծրագրի ծավալով, հարց ու պատասխանի մեթոդով իրականացվում է ուսուցման արդյունքների ստուգում:

15. Նախարարության համակարգի աշխատակիցների և ՔՊ կազմավորումների նախապատրաստման գործընթացը ավարտվում է ուսումնական ծրագրով նախատեսված ուսուցման, իրականացված շտաբային ուսումնավարժության և (կամ) հատուկ տակտիկական վարժանքների արդյունքների ամփոփմամբ:

III. ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԵՎ ՔՊ ԿԱԶՄԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ԱՆՁՆԱԿԱԶՄԻ ՈՒՍՈՒՑՄԱՆԸ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

16. Ծրագիրը յուրացրած Նախարարության համակարգի աշխատակիցները և ՔՊ կազմավորումները պետք է իմանան.

1) ռազմական գործողությունների իրականացման կամ դրանց հետևանքով առաջացած վտանգներից, ինչպես նաև տարերային ու տեխնածին բնույթի արտակարգ իրավիճակների (այսուհետ՝ ԱԻ) հետևանքներից առաջացած՝ ՔՊ կազմավորման պատասխանատվության տակ գտնվող տարածքի հնարավոր իրավիճակը,

2) ռազմական գործողությունների իրականացման կամ դրանց հետևանքով առաջացած վտանգներից, ինչպես նաև տարերային ու տեխնածին բնույթի արտակարգ իրավիճակներից պաշտպանության ձևերը,

3) ՔՊ կազմավորման նշանակությունն ու գործառնական պարտականությունները,

4) Նախարարության համակարգի աշխատակիցների և ՔՊ կազմավորումների ազդարարման, հավաքի ու ՔՊ կազմավորման պատրաստականության բերման կարգը,

5) Նախարարության համակարգի աշխատակիցների և ՔՊ կազմավորումների հավաքատեղին, հնարավոր արտակարգ իրավիճակներից տուժած տարածք շարժման երթուղիները և կարգը,

6) առկա տեխնիկայի, ինչպես նաև անհատական պաշտպանության միջոցների նշանակությունն ու տեխնիկական բնութագրերը, դրանց կիրառման կարգն ու հնարավորությունները,

7) տուժածներին առաջին օգնության ցուցաբերման և անվտանգ տարածքներ տեղափոխելու (տարահանման) կարգը,

8) ճառագայթային, քիմիական և մանրէաբանական աղտոտվածությամբ գոտիներում, ինչպես նաև փրկարարական և վթարավերականգնողական աշխատանքներ իրականացնելիս անվտանգության կանոնների պահպանումը:

Ձև 1

ՊԼԱՆ - ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և ՔՊ ոլորտներում շրջակա միջավայրի նախարարության համակարգի աշխատակիցների և ՔՊ կազմավորումների պատրաստման ուսումնական պարապմունքների

Հ /h	Պարապմունքի թեմա	Մասնակիցներ	Ուսուցման ձևը, անց-կացման ժամանակը	Ժամա-քանակ
1	2	3	4	5
ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՏՐԱՍՏՈՒԹՅՈՒՆ				
1	ՔՊ բնագավառի պետական քաղաքա-կանությունը և բնագավառը կանոնակարգող նորմատիվաիրա-վական հիմքերը	Նախարարության աշխատակիցներ,ՔՊ կազմավորումներ	03.2021թ., դասախո-սություն	2 ժամ
2	ՔՊ կազմավորումների կառուցվածքը, խնդիրները և ղեկավարումը: ՔՊ կազմավորումների պատրաստակա-	Նախարարության աշխատակիցներ,ՔՊ կազմավորումներ,	03.2021թ., դասախո-	2 ժամ

	նության բերման կարգը	Անտառային կոմիտե	սություն	
3	Անհատական պաշտպանության միջոցներ	Նախարարության աշխատակիցներ,ՔՊ կազմավորումներ	04.2021թ., դասախոսություն	2 ժամ
4	ՔՊ պաշտպանական կառույցներ	Նախարարության աշխատակիցներ, ՔՊ կազմավորումներ	05.2021թ., դասախոսություն	2 ժամ
5	Առաջին բուժօգնության հիմունքներ	ՔՊ առաջին բուժօգնության կազմավորում	06.2021թ., դասախոսություն	2 ժամ
6	Կառավարման կետերի տեսակները և նշանակությունը՝ ՊԿԿ-ի նախապատրաստմանը ներկայացվող պահանջները, պատրաստականության բերումը, հերթապահության կազմակերպումը, օպերատիվ խմբերի կազմը և նշանակությունը, հերթապահի պարտականությունները, ՊԿԿ-ում գտնվող հիմնական փաստաթղթերի ցանկը	Նախարարության աշխատակիցներ, ՔՊ կազմավորումներ, Անտառային կոմիտե	07.2021թ., դասախոսություն	2 ժամ
7	Ազդարարման ազդանշանները, դրանց տրման կարգն ու հաղորդման ձևերը: Աշխատակիցների գործողությունները ազդարարման ազդանշանների տրման դեպքում	Նախարարության աշխատակիցներ, ՔՊ կազմավորումներ, Անտառային կոմիտե	09.2021թ., դասախոսություն	2 ժամ
8	Աղետների (ուժեղ երկրաշարժի) դեպքում անձնակազմի պաշտպանության միջոցառումների կազմակերպումը	ՔՊ կազմավորումներ	10.2021թ., դասախոսություն	2 ժամ
ՀԱՏՈՒԿ ՊԱՏՐԱՍՏՈՒԹՅՈՒՆ				
1	«Անտառային հողերում հակահրդեհային միջոցառումների և ծագած հրդեհների դեպքում կոորդինացված գործողությունների իրականացումը» թեմայով շտաբային ուսումնավարժություն	ՔՊ ղեկավար կազմ, ՔՊ շտաբ, ՔՊ կազմավորումներ, տարահանման հանձնաժողով	Հունիսի առաջին տասնօրյակ, գործնական պարապմունք	Համաձայն հիմնական միջոցառումների պլանի
Ուսումնական հարցեր				

Շտաբային ուսումնավարժության թեմայից և իրավիճակից բխող միջանկյալների ծանուցում				
Ուսումնական հարցեր				
Նախարարության անձնակազմի «Հավաք» ազդանշանի ստացում, «Հավաք» ազդանշանի իրականացում, ՔՊ ոլորտին առնչվող փաստաթղթերի ստուգում				
2	«Անտառային կոմիտեի և Նախարարության ենթակա կազմակերպությունների ՔՊ կազմավորումների գործողությունները «Օդային տագնապ» ազդանշանի տրման և պատսպարման կազմակերպման դեպքում» թեմայով հատուկ տակտիկական ուսումնավարժություն	Անտառային կոմիտե, Նախարարության ենթակա կազմակերպություններ	տարվա ընթացքում, գործնական պարապմունք	Համաձայն հիմնական միջոցառումների պլանի
Ուսումնական հարցեր				
Տարահանման և պատսպարման միջոցառումների իրականացման կարգը, պատսպարման համար նախատեսված տարածքների պահպանության վիճակը, տարահանման երթուղիների ընդհանուր բնութագիրը, տարահանման հանձնաժողովի աշխատանքները				